ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. դեկտեմբերի 7-ից 9-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Քրիստինե Ղալեչյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա դեկտեմբերի 7-ից 9-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   « ԱՊՀ Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհուրդ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն ԱՊՀ Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհրդի տարեկան նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   ԱՊՀ Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհրդի տարեկան նիստի ընթացքում քննարկվել ԱՊՀ միջպետական ավտոմոբիլային ճանապարհների վիճակի խնդիրներն և առաջարկվել մի շարք լուծումներ: Բացի այդ կարևորվել է ավտոմոբիլային ճանապարհների նախագծման նորմերի կատարելագործման և նորարական տեխնոլոգիաների ներդրումների մասին ներկայացման հարցերը: ԱՊՀ անդամ պետությունների ներկայացուցիչները հանդես են եկել ազգային զեկույցներով:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Մասնակցել եմ ԱՊՀ ճանապարհաշինարարների միջկառավարական խորհրդի 45-րդ նիստին և հանդես եմ եկել ելույթով, որի ընթացքում ներկայացվել է ՀՀ ճանապարհային ենթակառուցվածքների առկա իրավիճակը և զարգացման հեռանկարները: Բացի այդ համառոտ ներկայացվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող առանցքային ծրագրերը. այդ թվում՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման ծրագիրը, պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ճանապարհաշինական ծրագրերը, Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն Մ-6 միջպետական ճանապարհի վերականգնման և բարեկարգման ազգային ծրագիրը և այլն:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Նիստի արդյունքում որոշվեց քայլեր ձեռնարկել ԱՊՀ Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Բացի այդ, առաջարկվեց դիտարկել MADI-ի գործունեությունը որպես ԱՊՀ անդամ պետությունների վերապատրաստման, մասնագիտական վերապատրաստման և Ճանապարհի հատվածներում անձնակազմի խորացված ուսուցման հնարավորություն, ինչպես նաև «Անկախ պետությունների համագործակցության ճանապարհներ» ամսագրի, «ԱՊՀ ավտոմոբիլային ճանապարհներ» մրցույթի և ԱՊՀ անդամ պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի և ասպիրանտների 2021-2022 թթ. ուսանողների գիտական աշխատանքների միջազգային մրցույթ կազմակերպելու մասին:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Առաջարկել ԱՊՀ երկրների նախարարություններին նախապես բաժանորդագրվել 2023 թվականի «Անկախ պետությունների համագործակցության ճանապարհներ» ամսագրին և ներկայացնել հրապարակումներ իրենց նախարարությունների, գերատեսչությունների աշխատանքի վերաբերյալ:

Առաջարկել խորհրդի անդամներին և ասոցիացված անդամներին ակտիվ մասնակցություն ունենալ «ԱՊՀ ավտոմոբիլային ճանապարհներ» մրցույթին:

Առաջարկել նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներին, ինչպես նաև ԱՊՀ երկրների համալսարաններին հանդիսավոր կերպով հանձնել ՄՍԴ-ի հոբելյանական միջոցառումներին չմասնակցած հաղթողներին դիպլոմները:

Առաջարկել խորհրդի անդամներին ակտիվորեն մասնակցել միջազգային ավտոարշավին և ուղարկել իրենց առաջարկություններ «ԱՊՀ Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհրդի քարտուղարությանը հաջորդի օրակարգը լրացնելու վերաբերյալ մինչև 2023 թվականի մարտի 1-ը:

10. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ</u>

13 դեկտեմբերի 2022թ.